

Տ. ԹԱԴԵՈՍ ԱԲԵՂԱ ՋԻՐԵԿՅԱՆ

Ծնվել է 1961 թ. սեպտեմբերի 16-ին, Երևան քաղաքում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է Երևանի Չարենցի անվան միջնակարգ դպրոցը:

1982 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1986 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1987 թ. ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը:

1987—89 թթ. սովորել և աստվածաբանության թեկնածուի գիտական աստիճանով ավարտել է Մոսկվայի հոգևոր ակադեմիան՝ պաշտպանելով «Հայ-կաթոլիկ հարաբերությունները Կիլիկյան թագավորության շրջանում (1080—1375 թթ.)» թեզը:

Այժմ հոգևոր ծառայության է նշանակված Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում: